ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ 2001 Վանաձոր, Հայքի հրապարակ
E-mail: vanadzorcity @mail.ru

☎ 4-45-33, 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

062. N.3813 «02» նոյեմբերի 2011թ.

Ձեր N ____ առ «____» _____2011թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Կից Ձեզ են ուղարկվում Վանաձորի համայնքի ավագանու՝ 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 56-Ն - 62 որոշումները:

Առդիր՝ 140 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատ.՝ Հր.Նազարյան
հեռ. 4-62-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 57-Ն

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի «ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 78-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետին և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան, հաշվի առնելով կոմունալ տնտեսության և բարեկարգման բաժնի պետի զեկուցագիրը՝

Վանաձորի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Վանաձորի համայնքի 2011 թվականի բյուջեի ծախսային մասում կատարել 5300.0 հազար դրամի փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2. Բյուջեի տողերը համարել փոփոխված՝ սույն որոշման 1-ին կետից բխող փոփոխություններին համապատասխան:

ԿՈՂՄ		ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գ.Քալանթարյան	Ա.Հախինյան	--------	-------
Կ.Պառավյան	Հ.Հովսեփյան		
Ա.Հարությունյան	Ա.Գինոսյան		
Ս.Աղաբեկյան	Ս.Դիլոյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

28.10.2011թ.

ք.Վանաձոր

Հավելված
Վանաձորի համայնքի ավագանու
«28» հոկտեմբերի 2011թ.
թիվ 57 -Ն որոշման

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

հազար դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Վարչական բյուջե	այդ թվում ըստ հոդվածների	
									Կոմունալ ծառա-յություններ 4213	Պահուստային միջոցներ 4891
	1	2	3	4	5	6	7	8	9	10
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	0,0	5300,0	-5300,0	0,0	5300,0	-5300,0
2511	05	1	1	Աղբահանում	5300,0	5300,0		5300,0	5300,0	
				Փողոցների սանիտարական մաքրում	5300,0	5300,0		5300,0	5300,0	
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-5300,0		-5300,0	-5300,0		-5300,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 58-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7,9,10 և 11-րդ հոդվածներով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել 2012 թվականի
   ա/ տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,
   բ/ տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ից:

ԿՈՂՄ		ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գ.Քալանթարյան	Ա.Հախինյան	--------	Հ.Հովսեփյան
Կ.Պառավյան	Ա.Գինոսյան		
Ա.Հարությունյան	Ս.Դիլոյան		
Ս.Աղաբեկյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

28.10.2011թ.

ք.Վանաձոր

Հավելված թիվ 1
Վանաձորի համայնքի ավագանու
« 28 » հոկտեմբերի 2011թ.
թիվ 58 - Ն որոշման

2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ
1.	Համայնքի տարածքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղ.տուրքը սահմանվում է՝ -հիմնական օբյեկտների համար ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ - 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ գ/ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ - մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ - 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝	15, 0 հազար դրամ 30,0 հազար դրամ 50,0 հազար դրամ 70,0 հազար դրամ 3,0 հազար դրամ 5,0 հազար դրամ
2.	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների	

	(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվության չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով - չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն	3,0 հազար դրամ
3.	Համայնքի տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար սահմանվում է տեղական տուրք	5,0 հազար դրամ
4.	Համայնքի տարածքում սահմանվում է տեղական տուրք՝ ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար	15,0 հազար դրամ 15,0 հազար դրամ
5.	Համայնքի տարածքում՝ ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	350 դրամ 220,0 հազար դրամ
6.	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ ա/ առևտրի օբյեկտների համար՝ բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ գ/ բաղնիքների (սաունաների) համար՝ դ/ խաղատների կազմակերպման համար՝ ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝	50,0 հազար դրամ 50,0 հազար դրամ 200,0 հազար դրամ 500,0 հազար դրամ 250,0 հազար դրամ՝

	գ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝	150,0 հազար դրամ
7.	Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար ընթացիկ տարվա համար	1,0 հազար դրամ
8.	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ ա/ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար բ/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար գ/ այլ արտաքին գովազդի համար դ/ դատարկ գովազդային վահանակների համար	1,0 հազար դրամ 2,5 հազար դրամ 1,0 հազար դրամ 0, 7 հազար դրամ
9.	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	1,0 հազար դրամ
10.	Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա սահմանվում է	15,0 հազար դրամ
11.	Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի յուրաքանչյուր կետի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար	60,0 հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԳԿԱՆ Վ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԲԱՅԵՐ ՊԵՏ

Հավելված թիվ 2
Վանաձորի համայնքի ավագանու
« 28 » հոկտեմբերի 2011թ.
թիվ 58 - Ն որոշման

2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1.	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000 դրամ
2.	Համայնքի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	15 000 դրամ
3.	Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար	20 000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԳԿ և ԵՀ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Վ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 60

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՍՏԻՔՆԵՐ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնքային միջոցների խնայողության տեսակետից Վանաձորի քաղաքապետարանի շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպումը ժամանակավորապես հնոցապաններ ընդունելու միջոցով առավել նպատակահարմար է, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Տալ համաձայնություն Վանաձորի քաղաքապետարանի շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպման համար 43 000 (քառասուներեք հազար) դրամ աշխատավարձի չափով ջեռուցման համակարգի օպերատորի երեք հաստիք և 45 000 (քառասունհինգ հազար) դրամ աշխատավարձի չափով ջեռուցման համակարգի օպերատոր-կաթսայատան շահագործման և անվտանգության պատասխանատուի մեկ հաստիք նախատեսելուն 2011թ. նոյեմբերի 01-ից մինչև 2012թ. մարտի 31-ը՝ կնքելով աշխատանքային պայմանագիր:

ԿՈՂՄ		ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գ.Քալանթարյան	Ա.Հախինյան	--------	-------
Կ.Պառավյան	Հ.Հովսեփյան		
Ա.Հարությունյան	Ա.Գինոսյան		
Ս.Աղաբեկյան	Ս.Դիլոյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

28.10.2011թ.

ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 61

ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 49Ա/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 1869461 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Տալ համաձայնություն Գր.Լուսավորչի փողոցի թիվ 49ա/1 հասցեում Վանաձորի համայնքի սեփականությունը ճանաչված, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող, հողամասի վրա գտնվող տաղավարների վարձակալությամբ տրամադրմանը:

ԿՈՂՄ		ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Գ.Քալանթարյան	Ա.Հախինյան	--------	-------
Կ.Պառավյան	Հ.Հովսեփյան		
Ա.Հարությունյան	Ա.Գինոսյան		
Ս.Աղաբեկյան	Ս.Դիլոյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ

28.10.2011թ.

ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 62

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀՈՒՇԱՔԱՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի քաղաքային համայնքի ավագանու անդամ Մեյրան Ղամբարյանի միջնորդությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Տալ համաձայնություն Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի թիվ 15 շենքի արևմտյան ճակատի հարավային կողմում, համաձայն հավելվածի, տեղադրել հուշաքար՝ նվիրված Կիրովականի երաժշտական կատարողական արվեստի երախտավոր Լևոն Սարգսի Սարգսյանի հիշատակին:

2. Հուշաքարի պատրաստման, տեղադրման ծախսերը կկատարվեն Լևոն Սարգսյանի հարազատների կողմից:

:

ԿՈՂՄ		ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Գ.Քալանթարյան	Ա.Հախինյան	--------	-------
Կ.Պառավյան	Հ.Հովսեփյան		
Ա.Հարությունյան	Ա.Գինոսյան		
Ս.Աղաբեկյան	Ս.Դիլոյան		

ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՐԲԻՆՅԱՆ
28.10.2011թ.
ք.Վանաձոր